սեանն Յունվարի։ Եւ ի սոյն ամի սարածեցաւ ժանտախտ յերուսաղէմ և ի սահմանս նորա. եւ մեռան բազումք ի քրիստոնէից և Հալեչայ և յայլազգեաց, և սեւեռաց ամիսս իրրեւ ԿԵ և դադարեաց։

Ոմանք ի բնակչաց Բեթղեհէմ աւանի յարուցին վէմս և կաքէին ընդ միսրանս Հայոց. իրրու թէ՝ վերին սենեակն և քարեայ սասիճանք նորին ոչ են ի մասնէ վանաց. իսկ Տէր Սէթ որդի Գրիգորի (եգիպտացի՝) նեղեալ ի խռովութենէ դիւզականաց, ժողովեաց զգլխաւորս այլազգեաց և քրիստոնէից Բեթղեհէմի, և նոքօք դիմեաց առ դատաւորն երուսաղէմի. մատոյց և զհրովարտակն արքունի, որ վասն Բեթղեհէմի վանաց (այս հրովարտակ չերեւի այժմ ի միջի). ընթերցաւ զայն դատաւորն առաջի դիւզականաց, և ևհարց ցնոսա զպատճառ ամբաստանութեան եւ խռովութեան նոցին. իսկ նոքա չկարացեալ պատասխանել զայլ ինչ, միայն ասացին թէ՝ չունիմք իրաւունս ոչ մեք և ոչ բնակիչք Բեթղեհէմ գիւղին՝ ասել ինչ վասն վերնայարկ սենեկին, որ հարաւակողմն վանաց, և ոչ սանդրխոցն՝ որ հանէ ի վեր. զի նոքա են մասն սեփհական վանացն այնորիկ, որոց տիրեալ է ազգն Հայոց ի վաղ ժամանակաց անտի. ուստի չունիմք վէմս եւ հակառակութիւնս վասն նոցա, և ոչ ընդ միաբանս և ընդ ժողովուրդս նոցա, որք բնակին ի վանս և ի գիւղն Բեթղեհէմի, եւ ոչ ընդ ուխտաւորս նոցա, լուեալ դատաւորին զբանս դիւզականաց՝ օրինօք դատարանի հաստատեաց զիրաւունս Տէր Սէթայ, պատուիրեալ դիւզականաց չյարուցանել զայնպիսի ընդունայն վէմս և խնդիրս. գրեալ ի ՌԷ Րէհէլ ամսոյ՝ ՉՌԶ (1510)։

Յետ յաիշատակելոյ վրաց զվիճակն Հայոց գԳողգոթայ, որպէս գրեցաք լիովին յառաջագոյն, եւ յետ անցանելոյ ամաց ինչ, լատին կղերք բռնի կորզեցին զմի մասն նորին, այն է Տարածման տեղին, ի ձեռաց նոցա. և ապդ առնել Վրաց Վասիլ Թագաւորի իւրեանց, զբռնաբարիլ իրաւանցն, բողոք կալաւ նա առ Սուլթանն Եգիպտոսի Մէլիք Աչրաֆ Սէյֆի, և առաքեաց դեսպանս և խնդրէր ի նմանէ գրել հրովարտակ առ կուսակալն երուսաղէմի եւ քերեկի. զի փոյթ կալցեն պաշտպանել զԹաչամանքն, զե-